

ՆԵՊԱՏԱՅՏԻՍ ԵՄ ՊԱՏՎԱՍՏ

Ի ° Ն Չ Պ Ե Տ Ք Է Ի Մ Ա Ն Ա Լ

1 Ինչու՞ պետք է պատվաստվել

Նեպատայտիս **Ե**-ն լուրջ հիվանդություն է:
 Նեպատայտիս **Ե** վիրուսը (HBV) կարող է պատճառել կարճատև (տուր) հիվանդություն, որն առաջնորդում է.
 • ախորժակի կորուստի • փորահարության եւ
 • հոգնածության փսխուքի
 • դեղնախտի (մաշկի եւ աչքերի դեղնում)
 • մկանային, հոդային եւ ստամոքսային ցավերի

Այն կարող է նաեւ պատճառել երկարատև (խրոնիկ) հիվանդություն, որն առաջնորդում է.
 • լյարդի քայքայման (ցիրոզ)
 • լյարդի քաղցկեղի
 • մահվան

Մոտավորապես 1.25 միլիոն բնակիչներ Միացյալ Նահանգներում վարակված են խրոնիկ հեպատայտիս **Ե** վիրուսով:

Նամաձայն նախահաշվարկների յուրաքանչյուր տարի.
 • 80,000 մարդ, մեծամասամբ երիտասարդներ, վարակվում են HBV-ով
 • Ավելի քան 11,000 հիվանդանոցային խնամքի են ենթարկվում հեպատայտիս **Ե** վիրուսի պատճառով
 • 4,000-ից 5,000 մարդ մահանում է խրոնիկ հեպատայտիս **Ե** վիրուսի պատճառով

Նեպատայտիս **Ե** պատվաստը կարող է կանխել հեպատայտիս **Ե** վիրուսը: Այն առաջին հավաք-քաղցկեղային պատվաստն է քանի որ այն կարող է կանխել լյարդի քաղցկեղի որոշ տեսակ:

2 Ինչպե՞ս է տարածվում հեպատայտիս **Ե** վիրուսը

Նեպատայտիս **Ե** վիրուսը տարածվում է վարակված անձի արյան կամ մարմնային հեղուկների հետ շփման միջոցով: Անձը կարող է վարակվել զանազան ճանապարհներով, ինչպիսիք են.
 • չպաշտպանված սեռական հարաբերություն ունենալով վարակված անձի հետ
 • անօրինական դեղերի սրսկման ընթացքում գործածվող ասեղների փոխանակման
 • աշխատանքային վայրում վարակված ասեղով անգիտակցաբար վիրավորվելով
 • ծննդաբերության ընթացքում երբ վարակը անցնում է վարակված սորից իր երեխային

Միացյալ Նահանգներում հեպատայտիս **Ե**-ով վարակված անհատների 1/3-ը չեն իմանում թե ինչպես են վարակվել:

3 Ո՞վ պետք է ստանա հեպատայտիս **Ե** պատվաստ եւ ե՞րբ

- 1) 18 տարեկան եւ ավելի փոքր յուրաքանչյուր անհատ
- 2) 18 տարեկանից բարձր չափահասներ որոնք ենթակա են վտանգի

HBV վիրուսով վարակվելու վտանգին ենթակա չափահասների թվին են պատկանում.
 - մարդիկ որոնք ունենան մեկից ավելի սեռական ընկերակից 6 ամսվա ընթացքում
 - տղամարդիք որոնք սեռական հարաբերություն են ունենում այլ տղամարդկանց հետ
 - վարակված անհատներ որոնք սեռական կապի մեջ են եղել
 - մարդիկ որոնք սրսկվում են անօրինական թմրադեղեր
 - առողջապահական խնամքի եւ հանրային ապահովության աշխատողներ, որոնք հավանաբար գործ են ունեցել վարակված արյան կամ մարմնային հեղուկների հետ
 - ընտանիքում իրար հետ շփվող խրոնիկ HBV-ով վարակված անհատներ
 - արյան դիալիզ ընդունող հիվանդներ

Եթե դուք վստահ չեք արդյոք ենթակա եք վտանգի թե ոչ, հարցրեք ձեր բժիշկին կամ բուժքոչը:

✓ **Մարդիկ պետք է ստանան հեպատայտիս **Ե** պատվաստի 3 դեղաչափի համաձայն հետևյալ աղյուսակի:** *Եթե դուք բաց եք թողել մի դեղաչափ կամ աղյուսակից ետ եք մնացել, հաջորդ դեղաչափը ստացեք հնարավորին չափ շուտ: Նորից վերսկսելու անհրաժեշտություն չկա:*

		Ո՞վ		
Նեպատայտիս Ե Պատվաստի Աղյուսակ		Մանկիկ որի մայրը վարակված է հեպատայտիս Ե վիրուսով	Մանկիկ որի մայրը վարակված չէ հեպատայտիս Ե վիրուսով	Ավելի մեծ երեխա, պատանի կամ չափահաս
ԵՄ Ք	Առաջին Դեղաչափ	Ծնունդից մինչև 12 ժամ	Ծնունդից մինչև 2 ամսական տարիքը	Որեւէ ժամանակ
	Երկրորդ Դեղաչափ	1-2 ամսական տարիքում	1-4 ամսական տարիքում (առաջին դեղաչափից առնվազն մեկ ամիս հետո)	1-2 ամիս առաջին դեղաչափից հետո
	Երրորդ Դեղաչափ	6 ամսական տարիքում	6-18 ամսական տարիքում	4-6 ամիս առաջին դեղաչափից հետո

- 2-րդ դեղաչափը պետք է տրվի առաջին դեղաչափից առնվազն 1 ամիս հետո:
- 3-րդ դեղաչափը պետք է տրվի 2-րդ դեղաչափից առնվազն 2 ամիս հետո եւ առնվազն 4 ամիս հետո առաջին դեղաչափից:
- 3-րդ դեղաչափը *չպետք է* տրվի 6 ամսականից ավելի ցածր տարիքի մանուկներին, որովհետեւ այդ կարող է նվազեցնել երկարատև պաշտպանության կարողությունը:

11-ից 15 տարեկան պատանիները կարող են պետք ունենալ հեպատայտիս **Ե** պատվաստի միայն երկու դեղաչափ, առաջինից երկրորդը 4-6 ամիս ընդմիջումով: Մանրամասնությունների համար դիմեցեք ձեր առողջապահական խնամատար բժիշկին:

Հեպատայտիս B պատվաստը կարող է տրվել այլ պատվաստների հետ միաժամանակ:

4 Որոշ մարդիկ չպետք է ընդունեն Հեպատայտիս B պատվաստ կամ պետք է սպասեն

Այն անհատները որոնք երբեք ունեցել են կյանքի սպառնացող գերզգայնական հակազդեցություն թթխմորի նկատմամբ (որն օգտագործվում է հաց թխելու համար) կամ **հեպատայտիս B պատվաստի նախապես ընդունած դեղաչափի նկատմամբ** չպետք է ստանան հեպատայտիս B պատվաստ:

Անհատներ որոնք թեթեակի կամ լուրջ հիվանդ են պատվաստի ընդունման ժամանակ, ընդհանրապես պետք է սպասեն մինչև ապաքինում, նախկան հեպատայտիս B պատվաստ ընդունելը:



Հավելյալ տեղեկությունների համար հարցրեք ձեր բժիշկին կամ բուժքրոջը:

5 Ո՞րոնք են Հեպատայտիս B պատվաստի վտանգները

Որեւէ պատվաստ, ինչպես որեւէ այլ դեղամիջոց, ունակ է լուրջ բարդություններ պատճառելու, ինչպիսիք են լուրջ գերզգայնական հակազդեցությունները: Հեպատայտիս B պատվաստի լուրջ վնաս կամ մահ պատճառելու վտանգը չափազանց փոքր է:

Հեպատայտիս B պատվաստ ստանալը անհամեմատ ավելի ապահով է քան հեպատայտիս B վիրուսով վարակվելը:

Հեպատայտիս B պատվաստ ստացող գրեթե բոլոր մարդիկ բարդություններ երբեք չեն ունենում:

Թեթեւ բարդություններ

- ցավ պատվաստման մասում, որը տեւում է 1-2 օր (11 երեխաներից եւ պատանիներից 1-ի մոտ եւ մոտավորապես 4 չափահասներից 1-ի մոտ)
- թեթեւից մինչև չափավոր ջերմություն (14 երեխաներից եւ պատանիներից 1-ի մոտ եւ 100 չափահասներից 1-ի մոտ)

Սուր բարդություններ

- լուրջ գերզգայնական հակազդեցություններ (շատ հազվադեպ):

Ի՞նչ անել մեղմ կամ սուր հակազդեցության դեպքերում

Ինչի՞ն պետք է ուշադրություն դարձնեմ
Որեւէ արտասովոր վիճակ, ինչպիսիք են լուրջ գերզգայնական հակազդեցություն, բարձր ջերմություն կամ անսովոր վարվելակերպ: Լուրջ գերզգայնական

հակազդեցությունները շատ հազվադեպ են որեւէ պատվաստի դեպքում: Եթե նման հակազդեցություններ պատահեն, ապա դրանք կլինեն պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում: Նման հակազդեցության նշաններ են՝ շնչելու դժվարություն, խոպոտ ձայն կամ հծծում, մաշկի այրոց, գունատություն, թուլություն, սրտի արագ տրոփում, կամ գլխապտույտ:

Ի՞նչ պետք է անեմ

- Հեռաձայնեք բժիշկին, կամ հիվանդին շուտափույթ կերպով տարեք բժիշկի մոտ:
- Հայտնեցեք ձեր բժիշկին եղելության մասին, թվական ու ժամանակը եւ ե՞րբ է տրվել պատվաստը:
- Պահանջեցեք ձեր բժիշկից, բուժքրոջից կամ առողջապահական բաժնից Vaccine Adverse Event Reporting System-ի (VAERS) ձեւ լրացնել կամ դուք ինքնիրդ հեռաձայնեք VAERS 1-800-822-7967:

7 Պատվաստի Վնասների Հատուցման Պետական Ծրագիր (National Vaccine Injury Compensation Program)

Հազվադեպ պարագայում եթե դուք կամ ձեր երեխան պատվաստի նկատմամբ ցուցաբերեք լուրջ հակազդեցություն, օգնության կարգով ստեղծվել է պետական ծրագիր, ինչնամքի ծախսերը հոգալու նրանց որոնք վնասվել են:

Պատվաստի Վնասների Հատուցման Պետական Ծրագրի մանրամասնությունների վերաբերյալ հեռաձայնեցեք **1-800-338-2382** կամ այցելեցեք ծրագրի website-ը հետեյալ հասցեյով <http://www.hrsa.gov/bhpr/vicp>

8 Ի՞նչպես կարող եմ իմանալ ավելին

- Հարցրեք ձեր բժիշկին կամ բուժքրոջը: Նրանք ձեզ կտան պատվաստումների մասին տեղեկատվական գրքույկի ներդիր, կամ կառաջարկեն տեղեկության այլ աղբյուրներ:
- Հեռաձայնեցեք ձեր շրջանային կամ նահանգային բաժնի ախտազերծման ծրագրին:
- Կապվեցեք Centers for Disease Control and Prevention (CDC)-ի հետ.
 - Call 1-800-232-4636 (1-800-CDC-INFO)
 - Այցելեցեք National Immunization Program-ի website-ը հետեյալ հասցեյով <http://www.cdc.gov/nip> կամ CDC-ի վիրուսային Հեպատայտիս Բաժնի website-ը հետեյալ հասցեյով <http://www.cdc.gov/hepatitis>



U.S. DEPARTMENT OF HEALTH & HUMAN SERVICES
Centers for Disease Control and Prevention
National Immunization Program

Vaccine Information Statement
Hepatitis B (7/11/01) IMM 663ML - Armenian 42 U.S.C. § 300aa-26
Translated by Transcend Translations, Davis, CA
<http://www.transcend.net>